«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

Մոդուլի անվանումը՝

«Մազերի հարդարում»

Արդունք1. Ներկայացնել մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը

Թեմա1.1 Մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը և դրանց նշանակությունը

Մազերի հարդարումը կարելի կատարել ինչպես վարսահարդարիչով /կարող է լինել դիֆուզորով/ և վարսաարդուկով, այնպես էլ էլետրական փաթաթուկով և փաթաթուկներով /կարող են լինել տարբեր չափերի/:Օգտագործվում են նաև կլոր և հարթ խոզանակներ:Օժանդակ նյութերից օգտագործվում են ոսկ,գել , լաք, մուս:

Հաճախորդի ցանկությամբ մազերը գզում են կամ կատարում են «Տուպիրովկա»: Սանրվածքին հարթ տեսք հաղորդելու նպատակով օգտագործվում են հարդարման համար նախատեսված գել կամ ոսկ: Սանրվածքի առավել երկար պահպանման նպատակով օգտագործում են լաք:





Մազերի փաթաթման տարբերակները՝ կախված ընտրված սանրվածքներից:

Մազերի հարդարումը վարսահարդարիչով կատարվում է կլոր կամ հարթ խոզանակներով՝ կախված մազերի երկարությունից:

Հարթ խոզանակները նախատեսված են մազերի արմատների բարձրացման համար՝ սանրվածքին համապատասխան ձև հաղորդելու նպատակով: Այս մեթոդը անվանում են «բոմբաժ»: Այն կիրառվում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց սրահներում՝ առօրյա և երեկոյան սանրվածքներ ստանալու նպատակով:Փոքր ծավալ ունեցող սանրվածքների դեպքում մազերը սանրում են և նշում ապագա սանրվածքի հիմնական ուղղությունները:Աշխատանքը սկսում են ներքևի՝ ծոծրակային հատվածից: Մազերը ներսի կողմից մտցնում են խոզանակը՝ ատամներն ուղղված դեպի ներքև: Վերցված մազափունջը թեթևակի բարձրացնում են, ընդ որում՝ մազերի ձգվածությունը ապահովում են խոզանակի առաջին շարքի ատամները՝ մազափնջի ներսի կողմից: Օդի հոսքը ուղղում են դեպի մազափունջը և ֆիքսում են այն՝ պահելով մինչև մազափնջի վերջնական չորացումը և հովացումը: Մազափնջի ծայրը ձգվում է մինչև համապատասխան սանրվածքը: Այնուհետև խոզանակը հանվում է չորացած մազափնջի միջից:Նմանապես հարդարվում են մյուս մազափնջերը՝ շարժվելով ծոծրակային հատվածից դեպի ճակատային /ֆրոնտալ/ հատվածը:

Կլոր խոզանակի միջոցով մազափնջերի ծայրերին ձև է հաղորդվում: 1

Այս մեթոդը կոչվում է «բրաշինգ». այն կիրառվում է միայն կանանց սրահներում:

Հարցեր
Ինչպիսի՞ հարդարման գործիքներ և նյութեր են օգտագործվում:
_____
_____
_____
Ի՞նչ նշանակություն ունեն օգտագործվող յուրաքանչյուր նյութը:
_____
_____
_____

Թեմա 1.2Հարդարման նյութերի օգտագործման հաջորդականությունը

Հարդարման ժամանակ հարկավոր է պահպանել նյութերի օգտագործման հաջորդականությունը:Կախված սանրվածքի մոդելավորումից և մազերի որակից/հաստ կամ բարակ, խիտ կամ նոսր/որոշվում է օգտագործվող նյութերի տեսակները:Եթե հարկավոր է սանրվածքին տալ ծավալ,ապա օգտագործվում է մուս՝ խոնավ մազերի վրա մինչև հարդարումը:Մուսը՝օգտագործվում է սանրվածքը անելուց առաջ/դիֆուզորով աշխատելուց,փաթաթուկներով, թաց մազերի տպավորություն ունեցող սանրվածքների դեպքում /:
Կան նյութեր, որոնց օգտագործումը կատարվում է սանրվածքի ավարտական աշխատանքների ժամանակ՝լաք, ոսք, գել:Մազերին հարթ տեսք տալու և այն մնայուն լինելու համար սանրվածքը ամրացնում են լաքով:Հարթ մազերի տեսքին ավելի ուղիղ և հարթ լինելու դեպքում օգտագործվում է ոսք կամ գել:Ոսք օգտագործվում է նաև հյուսերի կատարման ծամանակ:Այն օգնում է ստանալ հարթ՝առանց մազմզուկների,ձևավոր հյուսեր:

Հարցեր
Ինչպիսի՞ հաջորդականությամբ են օգտագործվում հարդարման նյութերը:
_____
_____
Ո՞ր նյութերն են օգտագործվում հարդարումից առաջ:
_____
_____
Ո՞ր նյութերն են օգտագործվում ավարտական աշխատանքների ժամանակ:
_____
_____

Թեմա 1.3 Մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերի կիրառման

անվտանգության տեխնիկայի կանոնները

Մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերը ունեն քիմիական ծագում,ուստի հարկավոր է լինել զգույշ և ուշադիր ալերգիկ ազդեցությունների առումով:Չի կարելի լաքի ամանները պահել տաքացնող սարքավորումներին մոտ, մազերին փչելու ժամանակ ուշադիր լինել, որպեսզի չփչվի հաճախորդի դեմքին կամ աչքերին/օգտագործել հատուկ պաշտպանիչ հարմարություն/:
Ալերգիկ ազդեցության դեպքում անմիջապես մաքրել գրգռված մասը, հաճախորդին մաքուր օդին հանել և օդափոխել սրահը:
Ոսկի, մուսի և գելի կիրառման դեպքերում նունպես հարկավոր է առաջնորդվել անվտանգության այս կանոններով:

Գործնական աշխատանք

Կատարել մազերի հարդարման ժամանակ օգտագործվող նյութերի անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում:

Արդունք 2. Մազերը նախապատրաստել հարդարման

Թեմա 2.1Աշխատանքի նախապատրաստում

Գործնական աշխատանք

Թվարկել հարդարման համար աշխատանքի նախապատրաստման փուլերը: Հերթականության պահպանման անհրաժեշտությունը:

Թեմա 2.2 Մազաբաժանում
Գործնական աշխատանք

1. Կատարել մազաբաժանում կանացի կարճ կտրվածքի համար:
2. Կատարել մազաբաժանում կանացի երկար շերտավոր կտրվածքի համար:
3. Կատարել մազաբաժանում տղամարդու դասական կտրվածքի համար:
4. Կատարել մազաբաժանում ասիմետրիկ կանացի կտրվածքի համար:

Արդունք 3. Պահպանել սանիտարիայի նորմերը
Թեմա 3.1 Հարդարման նյութերի ընտրություն

Հարդարման նյութեր ընտրելու ծամանակ առաջնորդվում են տվյալ սանրվածքի տեսակից,մազերի որակից,երկարությունից:Երկար մազերի համար կատարվող սանրվածքների դեպքում ընտրում են լաք,ոսք,մուս/այն կախված է մազերի որակից և սանրվածքի տեսակից՝հավաքված թե ոչ/:Միջին և կարճ մազերի դեպքում էլ ընտրությունը կատարվում է այդ նյութերի մեջ:Սանրվածքի կատարման ընթացքում,ինչպես նաև նախապատրաստական աշխատանքների ժամանակ,հարկավոր է պահպանել սանիտարիայի նորմերը:Դրանք են՝մազերը լվանալ,գործիքները հականեխել,աշխատանքային տարածքը լինի մաքուր և հականեխված:Վարսահարդարի անձնական հիգիենան նույնպես շատ կարևոր է.նա պետք է ունենա կոկիկ մաքուր արտաքին,ձեռքերը լինեն խնամված,մազերը հարդարված:

Հարցեր

Ինչպիսի՞ նյութեր է հարկավոր ընտրել մազերի հարդարման դեպքում:

_____

_____

Ինչպիսի՞ սանիտարիայի նորմեր են պահպանվում մազերի հարդարման ժամանակ:

_____

_____

Թեմա 3.2Հարդարման գործիքների ընտրություն
Գործնական աշխատանք

Ընտրել հարդարման համար անհրաժեշտ գործիքները և օժանդակ պարագաները:

Թեմա 3.3 Մազերի հարդարում
Գործնական աշխատանք

1. Ընտրել հարդարման համար համապատասխան գործիքները,օժանդակ պարագաները և նյութերը:
2. Կատարել կանացի շերտավոր մազերի հարդարում:
3. Կատարել կանացի կարճ մազերի հարդարում:
4. Կատարել կանացի«կարե» սանրվածքի հարդարում:
5. Կատարել տղամարդու մազերի հարդարում:

Արդունք 4. Տեղադրել կեղծամը
Թեմա 4.1 Կեղծամների տեսակները
Նախնադարյան տղամարդիկ ունեին ուժեղ կենդանիներին արտաքինապես նմանվելու ձգտում: Այդ նպատակով նրանք զարդարում էին իրենց գլուխները պսակներով, թռչունների փետուրներով, կենդանիների մորթիով:

Հին աշխարհում, այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հին Եգիպտոսը, Ասորեստանը, Բաբելոնը և այլն, կեղծամը համարվում էլ իշխանավորների և պալատականների արդուզարդ:

Բուրգերի բացահայտման և գերեզմանների ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են ոչխարի բրդից պատրաստված իրեր, ձիու, ցուլերի մազեր, թռչունների փետուրներ: Կեղծամների ձևերը, չափսերը և գույները պայմանավորված էին դրանց կրողների սոցիալական դիրքով և բնավորությամբ:

Հին Եգիպտոսում մազերը գոհաբերում էին աստվածներին:Եգիպտացիները իրենց գլուխը սափրում էին և կրում կեղծամ: Իսկ պալատականները միանգամից մի քանիկեղծամ էին կրում, որոնց միջև ստեղծվում էին օդային շերտեր, և նրանց գլուխըպաշտպանում էին արևային հարվածից: Կեղծամերն ունեցել են երկարաչափականպատկերների տեսք և ամենաթանկ կեղծամները պատրաստվել են բնական մազերից:

Մ. թ. ա. I հազարամյակին արհեստական մազերի նորաձևությունը Եգիպտոսից տարածվում է Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի հարակից երկրներում: Պարսկական թագավորները կրում էին շքեղ կեղծամներ:

Պարսկաստանից կեղծամների համբավը տարածվում է Հին Հունաստան, սակայն հելլենները դրանք օգտագործում են միայն որպես թատրոնի բեմական իրեր: Հռոմեական կայսրությունում կանանց շրջանում մեծ հանաչում էին վայելում արհեստական մազերը, հատկապես Հնդկաստանից բերված սև մազերով կեղծամները: Սակայն ամենաթանկարժեքն էին համարվում գերմանական՝ ոսկի և շեկ գույն ունեցող կեղծամները: Շիկահեր կեղծամները ոսկու գին ունեին: Բայց հարկ եղավ համարում նշել, որ շիկահեր կեղծամները կրում էին հիմնականում կուրտիզանուհիները: Սև մազեր ունեցողները բնորոշվում էին որպես համեստ և առաքինի կանայք:
Ի միջայլոց՝ հին հռոմեացիներն առաջինն են գլխի ընկել կեղծամն օգտագործել ոչ այն գեղեցկանալու, այլև հաղթությունը կոծկելու նպատակով:

Արևմտյան Եվրոպայում կեղծամները հանրահանաչ դարձան 14-18-րդ դարերում: 16-րդ դարում Անգլիայի թագուհի Ելիզավետան իր ճերմակ մազերը թաքցնում էր կեղծամի տակ, իսկ Լյուդովիկոս XII-ը դրանով ծածկում էր իր հաղթությունը՝ նպաստելով կեղծամների լայն տարածմանը: Երբ եկեղեցին արգելում է կեղծամ կրել, Լյուդովիկոս XIV-ը առաջինն էր, որ դրանք փոխարինում է արհեստական մազերով: Այնուհետև հատուկ հրամանով պարտադրում, որ իր բոլոր պալատականները կեղծամներ կրեն: Նրանք կատարում են հրամանը՝ Լյուդովիկոս XIV-ի դարը վերածելով կեղծամների դարաշրջանի:

Իհարկե, թագավորական էլիտան կրում էր փոքր չափերի կեղծամեր, որոնց տալիս էր «բոլոնկա», «պուդել» և այլ անվանումներ:

Վերնախավին արհեստական մազերով մատակարարելու համար թագավորն ավելացնում է վարսավիրների հաստիքը՝ հասցնելով այն մինչև 5000-ի: Տեղին է նշել, որ «վարսավիր» գերմաներենից թարգմանաբար նշանակում է «կեղծամներ պատրաստող»:

Լյուդովիկոս XIV-ի կառավարման ժամանակաշրջանում գոյություն ուներ կեղծամների 45 տեսակ: Իրեն հարգող մարդն ուներ դրանցից ա մե նաֆիչը 3-ը. սևը՝ առավոտվա, շագանակագույնը՝ ցերեկվա, բաց գույնը՝ երեկոյի համար: Եթե չէին կարողանում ճարել բաց գույնի արհեստական մազեր, ապա դրանք թաթախում էին դիմափոշու կամ ալյուրի ջ:

Ֆրանսիան կեղծամների արտադրման կենտրոն էր Եվրոպայում:Ամե- նաթանկարժեքը կնոջ շիկահեր մազերից պատրաստված կեղծամն էր, որն արժեր 3000 էֆյու, և այն կարող էին կրել միայն թագավորական ընտանիքի անդամները:

Պետրոս I-ի օրոք Ռուսաստանում կեղծամները դառնում են նորաձև: Կանանց դրանք դուր էին գալիս, ծառայողներն ընդունում էին որպես պարտականություն, իսկ հոգևորականները՝ միանշանակ հրաժարվում էին...

Սակայն Պետրոս I-ը ոչ մի նոր բանի նկատմամբ բարդույթ չուներ: Ինքն էլ կրում էր կարճ կեղծամ՝ 5 ռուբ. արժողությամբ, որը ժամանակին շատ էժան էր և դրա տակից երևում էին նրա երկար մազերը: Եվ որպեսզի կախման մեջ չլինեն արտասահմանցի մատակարարներից, նրանք Ռուսաստանում հիմնում են սեփական վարսավիրական արտադրություն:

Ֆրանսիայում բուրժուական հեղափոխության ժամանակ /1789թ./ արգելված էին ալյուրի կամ դիմափոշու մեջ թաթախված «սպիտակ» կեղծամները:

20-րդ դարի 60-ական թվականներին կեղծամեր պատրաստում էին արհեստական հումքից՝ նեյլոնից, ակրիլից, վինիլից: Սակայն վերջին ժամանակներում առաջնությունը տալիս են բնական նյութերին:

Գոյություն ունեն նաև շինյոններ, որոնք սանրվածքին տալիս են շքեղ տեսք և փարթամություն: Շատ տարածված են երկար մազերից պատրաստված «պոչիկ» և «ճակատային մազափունջ» շինյոնները:

80-ական թվականներին նորաձև էին համարվում բնական մազերից պատրաստված կեղծամները: Կանանց դուր էին գալիս այդ «ամենափրկիչ» միջոցները, որոնց շնորհիվ՝ առանց ավելորդ ջանք թափելու, նրանք միշտ խնամված տեսք ունեին:

Կեղծամերի տեսակներն ու կիրառությունը

Կեղծամի օգտագործումը ոչ միայն լուծում է մարդկանց մազաթափու- թյան կամ քիմի աթերապիայի հետևանքով առաջացած խնդիրները, այլև մարդու արտաքինին հաղորդում է յուրօրինակություն և հետաքրքրություն: Դրանք տարբերվում են ըստ ձևի, գույնի և երկարության: Բացի այդ՝ մարդիկ կեղծամեր օգտագործում են նաև գլուխը ցրտից պաշտպանելու հա- մար /մինչև - 15°/: Այս դեպքում կեղծամը փոխարինում էր գլխարկին:

Կեղծամները լինում են արհեստական և բնական:Բնական կեղծամեր: Մարդու մազերը առողջության և գեղեցկության գրավականն են բոլոր ժամանակներում: Եթե տղամարդը կամ կինն ունեն փարթամ, գեղեցիկ և փայլուն մազեր, ապա նրանք միշտ արժանանում են իրենց շրջապատի ուշադրությանը: Սակայն բնությունը ոչ բոլորին է օժտում այդ «հարստությամբ»: Ուստի մարդիկ փորձեցին լուծել այդ խնդիրը՝ստեղծելով բնական կեղծամ- եր: Սրանք անհիշելի ժամանակներից միջոց են մարդկանց ձեռքին՝ իրենց արտաքին տեսքում համապատասխան շտկումներ և փոփոխություններ կատարելու և այն ավելի հմայիչ դարձնելու համար:

Այժմ բնական կեղծամերի պատրաստումը հատուկ ուղղություն է վարսավիրական արվեստում: Դրանց պատրաստման համար օգտագործվումէ ոչ միայն որակյալ հումք, այլև ժամանակակից տեխնոլոգիաներ: Բնական կեղծամերի ստեղծումը դժվար ու աշխատատար գործ է. կարելի է ասել՝համարյա արվեստի գործ: Դրանց պատրաստման համար, բացի բնական մազերից, օգտագործվում է նաև այնպիսի գործվածք, որն իր բաղադրությամբ չի վնասում գլխամաշկը:

Բնական կեղծամները հարդարվում են ցանկացած ձևով և գործիքով/վարսահարդարիչ, վարսափաթաթուկ, լաք և այլն:Դրանք կարող են լվալ փրփրօճառով՝ բոլորովին չվնասելով այն: Մեր ժամանակներում բնական կեղծամերի օգտագործումն իրենց զարգացման գագաթնակետում են: Շատերի պահարաններում այս ատրիբուտը

զբաղեցնում է փողկապներին, պայուսակներին, ձեռնոցներին և այլ աքսեսուարներին հավասար տեղ:

Կեղծամերի խնամքը

Մինչ կեղծամը լվանալը, հարկավոր է կոկիկ ձևով հեռացնել հանգուցավորված կամ խճճված մազերը՝ ուղղելով դրանք մատներով: Կեղծամը հարկավոր է սանրել նոսր և խոշոր ատամներ ունեցող սանրով: Մազափնջերը հարթեցնում են և թրջում փրփրօճառած տաք ջրում՝ թողնելով 10 րոպե: Այնուհետև պարզաջրում են մինչև փրփրօճառի լրիվ մաքրվելը: Լվանալուց անմիջապես հետո բալզամը լուծել 1 լ սենյակային ջերմաստիճանով ջրի մեջ և թողնել 10 րոպե: Առանց պարզաջրելու

կեղծամը փաթաթել սրբիչի մեջ և նրբորեն քամել: Այն կարելի է օգտագործել միայն լավ չորանալու դեպքում: Մի՛ սանրեք կեղծամը թաց վիճակում: Թույլատրելի է միայն փարսահարդարիչով չորացնելը՝ օդի ոչ շատ տաք շիթով: Զոր մազերը սանրել՝ շարժվելով մազերի ծայրերից դեպի մազարմատները: Լվացումից հետո բնական կեղծամերը կարելի է հարդարել սովորական ձևերով: Այսպիսի արարողակարգ հարկավոր է անցկացնել ամիսը երկու անգամից ոչ ավելի:

Այժմ կեղծամերի օգտագործումը շատ արդիական է. հավելյալ մազաշերտերը մազերի երկարացման այլընտրանքային տարբերակ են, ինչպես նաև հանդիսավոր և հարսանյաց հանդեսների սանրվածքների ստեղծման կարևոր տարր:

Ցուրաքանչյուր մազաշերտ հատուկ ամրակներով մազարմատներին է ամուր ամրացվում, իսկ վերևից այն ծածկվում է հաճախորդի մազերով:

Հարցեր

Ինչպիսի՞ կեղծամների տեսակներ կան:

_____

_____

Ինչպիսի՞ խնամք է պահանջվում կեղծամների օգտագործմանն դեպքում:

_____

_____

Թեմա 4.2 Կեղծամի տեղադրում
Գործնական աշխատանք

Ընտրել համապատասխան կեղծամը տեղադրելու համար:
Կատարել կեղծամի տեղադրում:

Թեմա 4.3 Կեղծամի հարդարում
Գործնական աշխատանք

Կատարել տեղադրված կեղծամի հարդարում:
Ներկայացնել տվյալ կեղծամի հետ կատարվելիք գործողությունները: